

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՄԱՐԵ ՎԱՀԱՆԻ

ՀՀ-ՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածոլի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական դեկան՝

Տնտեսագիտության դոկտոր

Արմեն Աշմատի Հակոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան

Տնտեսագիտության թեկնածու
Գարիկ Հրայրի Դարբինյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. դեկտեմբերի 26-ին, ժամը 15³⁰-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Մ. Նալբանդյան փող. 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. նոյեմբերի 24-ին:

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  Ա. Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Մաքսային մարմինների հետ հարաբերություններում տնտեսվարողների համար մեծ կարևորություն ներկայացնող խնդիրներից է մաքսային սահմանով ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշումը: Վերջինիս հիմնական նպատակը մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ արժեքային մաքսային վճարների հաշվարկումը, արժեքային կարգավորման միջոցների կիրառումը և մաքսային վիճակագրության վարումն է: <<-ում մաքսային վարչարարության իրականացումը և մաքսային արժեքի որոշումն ունեն մի շարք հրատապ լուծում պահանջող և կարևոր հիմնախնդիրներ՝ կապված << մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ, քանի որ այն ոչ միայն մաքսային վճարների հաշվարկման հիմքն է, այլ նաև կարևոր դերակատարում ունի արտաքին առևտրի հաշվեկշիռը կազմելու և տնտեսության զարգացման գործում:

Երկրների միջև միջազգային տնտեսական համագործակցության ընդհանուր միտումը փոխհամաձայնեցված կամ միասնական քաղաքականության միջոցով ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատումի ազատ տեղաշարժի ապահովումն է: Այս համատեքստում կարևորվում է միջազգային տնտեսական համակարգին << ակտիվ ինտեգրման գործընթացը, որը հայրենական արտադրողներին հնարավորություն կտա իրենց ապրանքներն արտահանել նոր շուկաներ, ներգրավել միջազգային կապիտալը առավել հեռանկարային արտադրություններում, հնարավորինս շատ ապահովել ներքին շուկայի պահանջմունքները՝ դրանով իսկ կրճատելով ներմուծումից կախվածությունը: Նշված խնդիրների լուծման կարևորությունն էլ հիմք է դարձել առավել խորությամբ դիտարկել տնտեսության և մաքսային վարչարարության փոխկապվածությունը, որը տվյալ դեպքում արտահայտվել է մաքսային արժեք կատեգորիայի և տնտեսության զարգացման փոխադարձ կապի բացահայտման ու պարզաբանման մեջ: <Ետևաբար, անհրաժեշտություն է առաջանում մանրամասնորեն ուսումնասիրել մաքսային արժեքի որոշման հետ կապված հիմնախնդիրները, վերլուծել և բացահայտել << տնտեսության զարգացման առկա հիմնախնդիրները և ցույց տալ տնտեսվարողների արտադրական ու իրացման ծավալների փոփոխությունները՝ դրանց վրա մաքսային արժեքի խթանող կամ խոչընդոտող ազդեցությամբ պայմանավորված:

Այս և նման այլ խնդիրների ուսումնասիրմամբ ու բացահայտմամբ էլ պայմանավորված է ներկայացվող թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է հետազոտելով ՀՀ մաքսային արժեքի որոշման մեխանիզմները՝ մշակել և ցույց տալ դրանց արդյունավետության բարձրացման ուղիները և բացահայտել ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա: Նշված նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առաջադրվել և հետազոտվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել մաքսային արժեքի տնտեսագիտական բովանդակությունը և ցույց տալ դրա ազդեցությունը տնտեսության զարգացման վրա,
- բացահայտել ՀՀ տնտեսության զարգացման առկա հիմնախնդիրները՝ մաքսային արժեքի հետ կապված,
- ուսումնասիրելով մաքսային արժեքի որոշման միջազգային փորձը և զարգացման գործընթացը՝ տարբեր երկրների օրինակներով ցույց տալ մաքսային արժեքի ուղղակի խթանող կամ խոչընդոտող ազդեցությունը երկրների տնտեսության զարգացման գործընթացի վրա,
- բացահայտել ՀՀ կազմակերպությունների ֆինանսական վիճակի վրա մաքսային քաղաքականության ազդեցությունը, ինչպես նաև ցույց տալ մաքսադրույթներից կախված՝ դրանց արտադրական և իրացման ծավալների փոփոխությունները,
- գնահատել ՀՀ տնտեսության վրա մաքսային արժեքի ազդեցությունը՝ արտահանման և ներմուծման փոփոխություններով պայմանավորված:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է և դրանում գոյություն ունեցող մաքսային կարգավորումները, իսկ առարկան մաքսային արժեքի որոշման մեխանիզմի բարելավման ուղիներն են, տնտեսվարողների ֆինանսական ցուցանիշների վրա դրա ազդեցության գնահատումը և միջազգային փորձի կիրառմամբ հնարավոր օպտիմալ տարբերակների բացահայտումը:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության թեմայի տեսամեթոդական հիմքը մաքսային կարգավորման և մաքսային գործի կազմակերպման ոլորտին վերաբերող հայրենական և արտասահմանյան տնտեսագետների աշխատություններն ու հետազոտություններն, արտաքին տնտեսական հարաբերություններին վերաբերող միջազգային կազմակերպությունների կողմից հրատարակված նյութերը, ԱՀԿ, ՀԲ, ՀՄԿ, ՀՀ պաշտոնական հրատարակումներն են և միջազգային վիճակագրական տեղեկագրերը, մաքսային ոլորտին վերաբերող օրենքները, նորմատիվ հրավական ակտերը, ՀՀ կառավարության որոշումները, միջազգային ամենատարբեր կազմակերպությունների

տեղեկատվական նյութերը, հետազոտությունների արդյունքները, վիճակագրական աղյուսակները, ռեգրեսիոն վերլուծությունները, մաթեմատիկական մոդելավորման, կանխատեսման և գրաֆիկական այլ նյութերն են:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը: Հեղինակի կողմից ատենախոսությունում կատարված վերլուծական և հետազոտական աշխատանքի արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

- Բացահայտվել և հստակեցվել են \angle -ում մաքսային արժեքի որոշման բարելավման ուղիներ՝ կապված ծախսերի ներառման, միջազգային սկզբունքների կիրառման հետ և կատարվել են մաքսային ցուցանիշների գնահատումներ ու կանխատեսումներ:
- Բացահայտվել է ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի ազդեցությունը \angle ներքին շուկայում ապրանքների գների վրա և դրանց համեմատական վերլուծության միջոցով տրվել է այդ ազդեցության քանակական գնահատականը:
- Բացահայտվել է և գնահատվել ապրանքների ներմուծման և արտահանման հետ կապված տրանսպորտային ծախսերի ազդեցությունը \angle Ա-ի աճի վրա:
- Հիմնավորվել են \angle մաքսային քաղաքականության մեջ պաշտպանիչ և կարգավորիչ գործառույթների իրագործման ուղիները:

Ատենախոսության գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և իրապարակումները: Ատենախոսությունում ներկայացված մոտեցումները կարող են կիրառվել պետության մաքսային քաղաքականության և տնտեսության զարգացման միջոցառումների արդյունավետության բարձրացման գործում:

Ատենախոսության հիմնադրույթները արտացոլված են հեղինակի իրատարակած 7 /յոթ/ գիտական հոդվածներում, որոնցում արծարծված հարցերի մի մասն արդեն գործնական կիրառություն է գտել մաքսային համակարգում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 136 էջի վրա՝ առանց հավելվածների, ներառում է 42 աղյուսակ և 14 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ներածություն» բաժնում հեղինակի կողմից հիմնավորվել է թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, մեթոդական ու տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Մաքսային արժեքի որոշման և դրա ֆինանսական կառավարման մեթոդական հիմքերը» գլխում ներկայացված են մաքսային արժեքի տնտեսական և իրավական հասկացությունները, <<-ում մաքսային արժեքի որոշման առանձնահատկությունները, տնտեսության զարգացման և տնտեսվարողների ֆինանսական վիճակի վրա մաքսային քաղաքականության ազդեցությունը:

Պետական բյուջեի եկամտային մասի համալրման նպատակով՝ << մաքսային մարմինների կողմից հաճախ կիրառվում են նաև մաքսային արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցներ, որոնք էական ֆիսկալ ազդեցություն ունեն: Ուղղիչ գործակցի շատ փոքր փոփոխությունն անգամ բերում է դրամական մեծ արժեքների: Օրինակ, եթե մաքսային արժեքի հաշվարկն իրականացվում է $k=1.05$ գործակցով, ապա կառաջանա հետևյալ տնտեսական հետևանքը՝ շուկայական գինը՝ M -ը, կկազմի¹

$$M = \text{մաքսային արժեք} + \text{մաքսատուրքի տոկոսադրույթ} \times \text{մաքսային արժեք} + \text{ԱԱՀ-ի տոկոսադրույթ} \times \text{մաքսային արժեք} + \text{այլ ծախսեր} + \text{շահույթ}$$

Մաքսային արժեքը նշանակվել է v , մաքսատուրքի դրույքաչափը՝ տոկոսներով՝ t , այլ ծախսերը՝ c , շահույթը՝ r

$$M=(v+tv+0.2v)+c+r \tag{1}$$

$k=1.05$ գործակից կիրառելու դեպքում շուկայական նոր գինը՝ Mk -ն, կկազմի.

$$Mk=k(v+tv+0.2v)+c+r \tag{2}$$

Տեղադրելով k -ի արժեքը բանաձևի մեջ, կստացվի.

$$Mk=1.05(v+tv+0.2v)+c+r=1.05v+1.05tv+0.21v+c+r \tag{3}$$


$$Mk-M=1.05v+1.05tv+0.21v+c+r-v-tv-0.2v-c-r=0.05v+0.05tv+0.01v=0.06v+0.05tv^2 \tag{4}:$$

Հաշվարկներից ակնհայտ է, որ մաքսային արժեքի փոփոխությունը ցանկացած $k>1$ գործակցով

¹ Մասնագիտական գրականության մեջ մաքսային արժեքի հաշվարկման ընդունված կարգը հեղինակը ներկայացնում է բանաձևային տեսքով՝ ներմուծելով նաև ուղղիչ գործակցի գաղափարը

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ սեփական վերլուծությունների հիման վրա

Կրերի շուկայական գնի ավելի մեծ փոփոխության: Սույն բանաձևը կիրառական է գործակցի տարբեր արժեքների համար (տես գծապատկեր 1-ը):



Գծապատկեր 1. Մաքսային արժեքի փոփոխությունը՝ ուղղիչ գործակիցներից կախված³

Ներկայացվել է 2015թ. տրանսպորտային ծախսերի (ՏԾ) կառուցվածքը որոշ ներմուծվող ապրանքների համար (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

Որոշ ներմուծվող ապրանքների տրանսպորտային ծախսերի կառուցվածքը⁴

Ապրանք	Ներմուծման երկիր	Ապրանքի արժեքը, ԱՄՆ դրամ	ՏԾ-ը 1 կոնտեյների հաշվով (20'=20տոսնա)	Ապրանքի արժեքի մեջ ՏԾ բաժինը ⁵
Հյութեր	Ավստրիա	18 000.00	4000.00/20 տոն.	22.2%
Հանքային ջուր	Ֆրանսիա	16 800.00	4900.00/20 տոն.	29.2%
Սիգարետ	Հոնաստան	210 000.00	3800.00/20 տոն.	1.8%
Թխվածք	Իտալիա	34 500.00	4700.00/20 տոն.	13.6%
Ձիթապտուղ	Հոնաստան	18 600.00	2800.00/20 տոն.	15.1 %
Մակարոնեղեն	Իտալիա	27 600.00	3300.00/20 տոն.	12 %
Լամպեր և մարտկոցներ	Չինաստան	77 000.00	6000.00/20 տոն.	7.8 %
Կերամիկ. սալիկ	Չինաստան	18 000.00	3500.00/20 տոն.	19.4 %
Կերամիկ. սալիկ	Իսպանիա	25 000.00	2900.00/20 տոն.	11.6 %
Շինանյութ	Թուրքիա	9000.00	2400.00/20 տոն.	26%

³ Գծապատկերը և հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ մաքսային արժեքի նկատմամբ ուղղիչ գործակցի պայմանական արժեքների կիրառման միջոցով

⁴ «Տրանսպորտային իրավիճակը և բեռնափոխադրումների ծախսերի հաշվարկը»: Ի. Բելուբեկյան, Զեկույց «Հայաստանի արտահանման խթանման խնդիրները» թեմայով կոնֆերանսի: Երևան, ՀԱԱՀ, 2015թ.

⁵ Հաշվարկվել է հեղինակի կողմից՝ աղյուսակ 1-ի տվյալների հիման վրա

Հեղինակի կողմից հաշվարկվել և ներկայացվել են նաև միավոր ապրանքի արժեքի մեջ տրանսպորտային ծախսերի բաժինը: Ներմուծվող միավոր ապրանքների վերջնական արժեքի մեջ տրանսպորտային ծախսերը միջինացված մեծությամբ կազմում են 16%:

Փորձ է արվել հաշվարկել, թե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը հաշվարկելիս դրանցում ներառվող տրանսպորտային ծախսերը ստացվող վերջնական գնի վրա ինչ ազդեցություն են ունենում, որը հաշվարկվել է հեղինակի կողմից մշակված բանաձևի օգնությամբ՝ հիմք ընդունելով պաշտոնական վիճակագրական տեղեկատվությունը և սեփական վերլուծությունների արդյունքները:

Արդյունքում ստացվել է, որ ներմուծվող ապրանքների համար մաքսային արժեքը հաշվարկելիս դրանում տրանսպորտային ծախսերի ներառման դեպքում ապրանքի արժեքը կավելանա առնվազն 20%-ով, ինչը որ ներմուծողի համար ստեղծում է լրացուցիչ ֆինանսական ծախսումներ, որոնք իրենց արտացոլումն են ստանում շուկայում ապրանքի վաճառքի գնի վրա:

Արտաքին առևտրի զարգացմանը խոչընդոտող գործոններից է այն, որ արտահանումը հիմնականում տարբերակված չէ աշխարհագրական և ապրանքային կառուցվածքային տեսանկյունից: Եթե սկզբնական շղջանում << առևտրային հարաբերություններն իրականացվում էին հիմնականում ԱՊՀ տարածաշրջանի հետ, ապա հետագայում այն ձեռք է բերում առավելապես դեպի ԵՄ երկրներ ուղղվածություն, իսկ ԵԱՏՄ-ին անդամակցության արդյունքում սկզբում թե ներմուծումը, թե արտահանումը կրճատվել են, որն աստիճանաբար, ըստ հեղինակի, կարգավորվում է, միայն նվազել է հայրենական ապրանքների նկատմամբ պահանջարկը ԵՄ և այլ երկրների կողմից (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2

<< արտահանումն ու ներմուծումն ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար) ⁶

Երկիր	2012թ.		2013թ.		2014թ.		2015թ.		2016թ.	
	Արտ	Ներմ								
Ընդամ.	1380.1	4261.2	1478.8	4385.9	1547.2	4424.4	1485.4	3197.8	1782.9	3292.4
ԱՊՀ երկր.	336.6	1334.5	400.2	1299.9	357.1	1363.1	267.0	1110.6	411.0	1132.8
ԵՄ երկր.	512.5	1127.1	494.2	1159.1	465.2	1134.8	459.1	779.8	478.8	739.9
Այլ երկր.	531.1	1799.6	584.4	1926.8	725.0	1926.6	759.4	1307.4	893.1	1419.7

Ըստ հեղինակի, ավելի նպատակահարմար է, որ ներմուծումը սպասարկի արտահանմանն ուղղված ներքին արտադրությունը, ինչը հնարավոր է իրագործել առաջադեմ տեխնիկայի և տեխնոլոգիայի ներմուծմամբ:

⁶ <http://armstat.am/am/?nid=126&id=10001> (<< ԱՎԾ պաշտոնական կայքէջ)

Ատենախոսության երկրորդ՝ «Մաքսային արժեքի որոշման միջազգային փորձը և դրա կիրառումը <<Հ-ում» գլխում ներկայացվել են մաքսային արժեքի դերը բյուջետային մուտքերի ապահովման գործում, կատարվել է մաքսային արժեքի որոշման միջազգային փորձի վերլուծություն՝ համաշխարհային գլոբալիզացիայի ազդեցությամբ, ինչպես նաև վերլուծվել է մաքսային կարգավորումների ազդեցությունը << կազմակերպությունների արտադրական և իրացման ֆինանսական ցուցանիշների վրա:

Հեղինակը կատարել է վերլուծություններ և այլ երկրների հետ համեմատություններ՝ բացահայտելու համար բյուջեի եկամուտների համալրման և ապրանքաշրջանառության խթանման գործում մաքսային արժեքի դերակատարումը: Մասնավորապես, նշվում է, որ մաքսային արժեքի որոշման ընդունված կարգը ընդունելի է և կիրառական բոլոր այն երկրների կողմից, որոնք ԱՀԿ անդամ են⁷: Սակայն, ելնելով որոշակի առանձնահատկություններից (տնտեսության զարգացման աստիճան, դեպի ծով ելքի առկայություն՝ երկրները կարող են մաքսային արժեքի որոշման կարգում տարբերություններ ունենալ): Հետևաբար, հեղինակը <<Հ-ում մաքսային արժեքի գնահատման մեթոդների համար նման երկրների փորձն է առաջարկում: Ըստ նրա, նպատակահարմար է <<Հ-ում ևս մաքսային արժեքում ներառվող և չներառվող ծախսերը հաշվարկել ապրանքների տեղափոխման պայմաններից ելնելով, այսինքն՝ CIF պայմանով ներմուծման դեպքում արտահանման երկրից << կատարված փոխադրման և նմանատիպ այլ ծախսերը չներառել մաքսային արժեքի մեջ, ինչի արդյունքում տնտեսվարողները ավելի քիչ մաքսային վճարումներ կկատարեն, կունենան լրացուցիչ ազատ դրամական միջոցներ և շուկայում ապրանքների վաճառքի գինն ավելի ցածր կլինի:

Առաջարկվում է նաև վարչարարական և մեթոդական բնույթի բարեփոխումներ իրականացնել:

Հետազոտության շրջանակներում ցուց տալու համար մաքսային արժեքի հետ կապված բյուջեի ծևավորման, տնտեսական աճի, տնտեսական այլ ցուցանիշների փոփոխությունները 2010-2016թթ.⁷ Դիտարկվել է այնպիսի երկրների փորձը, որոնք զարգացման որոշակի մակարդակում << հետ համադրելի են եղել, սակայն կարողացել են տնտեսական արագ աճ գրանցել՝ մասամբ նաև ճիշտ ընտրված մաքսային քաղաքականության շնորհիվ (ՌԴ, Բելառուս, Վրաստան, Սինգապոր, Մալայզիա): Ըստ տարիների վերլուծվել են ձեռներեցությանը խոչընդոտող հիմնական գործուները, ՀՆԱ-ի աճը, արտաքին առևտության աճը՝ ՀՆԱ-ի նկատմամբ, բյուջեում մաքսային եկամուտների բաժինը:

⁷ https://www.wto.org/english/thewto_e/whatis_e/tif_e/tif_e.htm (ԱՀԿ պաշտոնական կայքէջ)

Ուսումնասիրվող երկրների մոտ, ի թիվս տնտեսության զարգացման վրա ազդող մի շարք գործոնների՝ մեծ է նաև իրականացվող կառավարման, առկա կոռուպցիայի, գործող հարկային և մաքսային քաղաքականության ազդեցութունը: Մասնավորապես՝ բիզնեսին և տնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոնների շարքում տոկոսային արտահայտմամբ ԵԱՏՄ երկրների մոտ ամենամեծ քաժինն ունեն կոռուպցիան ($<-11.3\%$, $0.7-10.9\%$, $7.2\text{ազախ.}-12.8\%$), անարդյունավետ կառավարումը ($<-10.6\%$, $0.7-6\%$, $7.2\text{ազախ.}-4.1\%$), հարկերի մակարդակը ($<-10.5\%$, $0.7-13.3\%$, $7.2\text{ազախ.}-13\%$), հարկային և մաքսային քաղաքականությունը ($<-10.1\%$, $0.7-7.7\%$, $7.2\text{ազախ.}-8.9\%$): Նույն գործոնները Վրաստանի մոտ կազմում են համապատասխանաբար 0.1% , 9.8% , 4.6% , 3.9% , Մալայզիայի մոտ՝ 8.8% , 8.4% , 5.0% , 4.0% , Սինգապուրի մոտ՝ 0.1% , 2.7% , 3.1% և 2.1% ⁸ (տես աղյուսակ 3-ը և գծապատկեր 2-ը):

Աղյուսակ 3

ՀՆԱ-ի աճն ըստ 2010-2016թթ.՝ տոկոսներով⁹


Երկիր	2010	2011	2012	2013	2014	2015	2016	Միջին աճ, %	Ստանդարտ շեղում ¹⁰
<0	2.2	4.7	7.2	3.3	3.6	3.0	0.2	4.0	1.8
0.7	4.5	4.3	3.5	1.3	0.7	-3.7	0.4	1.8	3.1
Բելառուս	7.7	5.5	1.7	1.1	1.7	-3.9	-1.9	2.3	4.0
Վրաստան	6.3	7.2	6.4	3.4	4.6	2.8	4.7	5.1	1.8
Մալայզիա	6.9	5.3	5.5	4.7	6.0	5.0	5.8	5.6	0.8
Սինգապուր	15.2	6.2	3.7	4.7	3.3	2.0	2.9	5.9	4.8

Համեմատական վերլուծության ընթացքում բացահայտվում է երկրների տնտեսական զարգացման, տնտեսական աճի և երկրների կողմից իրականացվող հարկային և մաքսային քաղաքականության, կառավարման արդյունավետության և հարկային բեռի միջև կապը: Առավել մեծ արդյունք և տնտեսական զարգացում գրանցած երկրներում վերոնշյալ խոչընդոտող գործոնների ցուցանիշները փոքր կամ շատ փոքր են: Հիմնականում ԵԱՏՄ անդամ երկրներում, որտեղ ցածր են տնտեսական աճի ցուցանիշները, նշված գործոններն ունեն էական ազդեցություն տնտեսության վրա: Նույն երկրներում, մաքսային արժեքով պայմանավորված, մաքսային եկամուտները ողջ հարկային եկամուտների նկատմամբ կրում են հետևյալ բնույթը՝ ԵԱՏՄ երկրներում ֆիսկալային մեծ ուղղվածություն (միջինը 30% հարկային եկամուտների նկատմամբ), մինչդեռ Մալայզիայում և Սինգապուրում դա կազմում է 2-5%, որը ցուցադրել է անշեղ նվազման միտում 2010-2016թթ.:

⁸ «The global competitiveness report 2016-2017» KI. Schwab. World economic forum: Switzerland, 2016, 400 pg.

⁹ Նայել նոյն տեղում, էջ 297

¹⁰ Հաշվարկվել է հեղինակի կողմից՝ աղյուսակ 3-ի տվյալների հիման վրա



Գծապատկեր 2. Երկրների արտահանման և ներմուծման աճը ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով ըստ 2005-2015թթ.¹¹


Ամբողջացնելով կատարած վերլուծությունները՝ հեղինակը նշում է, որ տնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոնները մեծ կապ ունեն ապրանքների մաքսային արժեքի հետ՝ հատկապես երբ ֆիսկալային նպատակներով կիրառում են ուղղիչ գործակից՝ ներմուծման մաքսային արժեքը հաշվելիս (<<-ում):

Հեղինակը նաև ներկայացրել է 2014-2016թթ. և կանխատեսել 2017-2020թթ. << ԿԱ ՊԵԿ կողմից << պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների և պետական տուրքի մեծությունը և նախորդ տարվա նկատմամբ աճը՝ տոկոսներով՝ ցուց տալով, որ ըստ տարիների բյուջեի մուտքերում ավելանում են հարկային եկամուտները, որոնց կազմում իրենց դերակատարումն ունեն մաքսային մարմինների կողմից հավաքագրված վճարները (տես գծապատկեր 3-ը):

Պետական բյուջեում մաքսային եկամուտների նման աճը բացահայտում է մաքսային արժեքի ֆիսկալ բնույթը: 2015թ.-ին միայն նկատվում է մաքսային եկամուտների նվազում, որն էլ հեղինակը պայմանավորում է <<՝ ԵԱՏՄ անդամակցությամբ: 2016թ. կրկին աճում է՝ հասնելով 29.9%-ի: Սակայն, երկրի կայացմանը զուգընթաց՝ երկրի ՀՆԱ-ում մաքսային եկամուտների բաժինը աստիճանաբար պետք է նվազի՝ իր տեղը զիջելով հարկային եկամուտներին: Դա է վկայում այլ երկրների փորձը: Օրինակ՝ զարգացած երկրների մեծ մասում այդ ցուցանիշը կազմում է բյուջեի 1%-ից փոքր մասը, զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներում՝ մոտ 9%-ը¹²:

¹¹ Գծապատկերը կազմվել է [wdi.worldbank.org/table/4.14\(Central government revenues\)](http://wdi.worldbank.org/table/4.14(Central government revenues)) տվյալների հիման վրա

¹² <http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=2&series=GC.TAX.IMPT.ZS&country> (<Բ տվյալների բազա)



Գծապատկեր 3. «Հ պետական բյուջեում հարկային և մաքսային եկամուտների շարժը 1998-2020թթ.¹³

Երկրների ներմուծման առավել արդյունավետ քաղաքականությունը համեմատելու համար հեղինակը վերլուծել է «Հ, ՌԴ, Վրաստանի, Լեհաստանի, Ճապոնիայի և ԱՄՆ-ի ներմուծման քաղաքականությունը։ Ուսումնասիրելով մաքսատուրքի դրույքաչափերի տարբերությունները՝ հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ նշյալ երկրները հիմնականում ձգտում են պաշտպանել հայրենական արտադրողներին և խթանել տեղական արտադրությունը։ Առաջնորդվելով ճապոնիայի բազմամյա փորձով, առաջարկվում է «Հ-ում որոշակի ներմուծվող ապրանքների համար՝ կախված դրանց օգտագործման նպատակից, կիրառել «խառը» մաքսատուրքեր։ Առաջնորդվելով ԱՄՆ-ի օրինակով՝ առաջարկվում է «Հ-ում ներդնել ավտոմատացված առցանց համակարգ՝ կրճատելով և վերացնելով փաստաթղթաշրջանառության ծավալը։

Մաքսատուրքերի մեծությունից կախված՝ փոփոխվում են ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսականին ու ծավալները, որոնց փոփոխություններն ել անմիջականորեն անդրադառնում են կազմակերպությունների կողմից պետական բյուջե գանձվող պարտադիր վճարների մեծության վրա, ինչպես նաև խթանում կամ զսպում են դրանց արտադրական, ներմուծման և արտահանման գործունեությունները։ Այստեղ հեղինակը ներկայացրել է նաև, որ

¹³ Կանխատեսումը կատարվել է հեղինակի կողմից $Y=a+bX$ գծային ռեգրեսիոն բանաձևի կիրառմամբ:
 b -էլաստիկություն, ցույց է տալիս անկախ փոփոխականի 1 միավորի փոփոխության ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա. $b=N\sum XY-(\sum X)(\sum Y)/N\sum x^2-(\sum x)^2$, որտեղ Y -կախյալ փոփոխական (մաքսային եկամուտներ), X -անկախ փոփոխական (տարի), N - դիտարկվող (X, Y) զույգերի քանակը, a -սկզբնական արժեք, (քանի որ տվյալները 0-ից մեծ ցուցանիշներ են, առաջանում է որոշակի սկզբնական արժեքի ներդրման անհրաժեշտություն՝ $a=\sum Y-b\sum X/N$): R^2 -դետերմինացիայի գործակիցն է և ցույց է տալիս կախյալ փոփոխականի փոփոխության այն մասը, որը պայմանավորված է մոդելում դիտարկվող անկախ փոփոխականի փոփոխությամբ և որքան R^2 -ը մոտ է 1-ին, այնքան ավելի ուժեղ է անկախ փոփոխականի ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա և հակառակը

մաքսատուրքի դրույքաչափի 2%-ով բարձրացումը հանգեցնում է երրորդ երկրներից ՀՀ ներմուծման ծավալների 23%-ով կրճատմանը և ԵԱՏՄ անդամ երկրներից՝ 12%-ով աճին:

Ատենախոսության երրորդ՝ «Մաքսային արժեքի որոշման բարելավումը և ազդեցության գնահատումը ՀՀ տնտեսության վրա» գլխում բացահայտվել և գնահատվել է արտահանման և ներմուծման ֆինանսական ցուցանիշների վրա մաքսային արժեքի ազդեցությունը, ինչպես նաև՝ ՀՀ-ում տնտեսության զարգացման հեռանկարները՝ արտահանման և ներմուծման բարելավումից կախված:

Աղյուսակ 4

ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման փոփոխությունները ՀՀ-ում՝ ըստ

2011-2016թթ. և կանխատեսում 2020-2030թթ. համար, մլրդ ԱՄՆ դոլար¹⁴

Ցուցանիշ	Փաստացի տվյալներ						Գծային կանխատեսում ¹⁵		
	2011	2012	2013	2014	2015	2016	2020	2025	2030
ՀՆԱ	9.2	10.6	11.1	11.6	10.5	10.6	11.94	12.97	13.99
Արտահանում	1.19	1.51	1.63	1.69	1.62	1.78	2.19	2.67	3.14
Ներմուծում	3.2	3.6	3.8	3.7	2.8	3.3	3.03	2.74	2.46
Արտահանում/ՀՆԱ, %	12	14	15	15	16	17	18	21	22
Ներմուծում/ՀՆԱ, %	36	35	34	32	27	31	25	21	18

Վերլուծության արդյունքում հեղինակը նշում է, որ ՀՀ մաքսային կարգավորումն ու մաքսային քաղաքականությունը գործում են անարդյունավետ և այնքան էլ չեն նպաստում տնտեսության զարգացմանը: Այդ պատճառով առաջարկվում է վարել այնպիսի քաղաքականություն, որ գների ինդեքսներն ունենան աճի հակառակ ուղղվածություն, ինչը կնպաստի տնտեսական աճի արագ ապահովմանը (լինելով կարևոր գործոն միջազգային առևտրի զարգացման կամ խոչընդոտման համար՝ մաքսային կարգավորումը երբեմն առանձին երկրների կողմից կիրառվում էր որպես սուբյեկտիվ խորական միջոցառում՝ սեփական երկրի տնտեսության շահերի պաշտպանության համար: Երկրների կողմից բոլոր նման միջոցառումներն, ի վերջո, բերեցին իրական դրական արդյունքների՝ համաշխարհային առևտրի և ապրանքային, և դրամական աճին¹⁶):


¹⁴ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀԲ-ի կողմից հրապարակվող տվյալների հիման վրա (<https://data.worldbank.org/data-catalog/GDP-ranking-table>)

¹⁵ Կանխատեսումը կատարվել է ցուցային ռեգրեսիայի մեթոդով և ցույց է տալիս կախյալ և անկախ փոփոխականների միջև փոփոխարաբերությունների մոդելավորման ցուցային մոտեցումը. $P_n(x)=A_0X^n+A_{n-1}X^{n-1}+\dots+A_1+1$: Ցուցային ռեգրեսիան կիրառվում է այն դեպքում, եթե վերջինիս դետերմինացիայի գործակիցը՝ R^2 -ը, ավելի մեծ է մնացած մոդելների գործակցից

¹⁶ Վերլուծությունները կատարվել են հեղինակի կողմից՝ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կոնֆերանսի տվյալների բազայի՝ <http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx?ReportId=89795> պաշտոնական կայքէջի հիման վրա

ՀՆԱ-ի աճը պայմանավորող գործոնների թվում ՕՌԻՆ-ի աճը չի դրսևորվել, այլ գոյություն ունի հակառակը, ՀՆԱ-ի աճը հանգեցնում է ՕՌԻՆ-ի աճին: Իսկ ՀՆԱ-ի և արտահանման միջև գոյություն ունի երկպողմանի փոխազդեցություն և մեկի աճն անպայման հանգեցնում է մյուսի աճին (տես աղյուսակ 4-ը), ինչպես նաև տնտեսական աճի վրա ազդող դրական և բացասական ոիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում տնտեսական աճը կունենա նվազման ուղղվածություն:

Հեղինակը նաև վերլուծությամբ և կանխատեսմամբ, ինչպես նաև ատենախոսությունում ներկայացված հաշվարկների միջոցով պարզել է, որ 2011-2016թթ. արտահանման տարեկան 1% աճը հանգեցրել է ՀՆԱ-ի տարեկան մոտ 0.5-ից 1.3% աճի, իսկ 2020-2030թթ. արտահանման տարեկան 1% աճը կիանգեցնի ՀՆԱ-ի 0.4-0.5% աճի¹⁷:



Գծապատկեր 4. ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման փոփոխությունները ՀՀ-ում 2011-2016թթ. և կանխատեսում 2020-2030թթ. համար¹⁸

ՀՆԱ-ի աճի նման տատանումը կախված է արտահանման բնույթից՝ հումքային արտահանում, ծառայությունների արտահանում, թե պատրաստի արտադրանքի արտահանում: Եթե արտահանման մեջ գերակշռում է պատրաստի արտադրանքը, ապա սա նշանակում է, որ ՀՆԱ-ի աճը պետք է լինի ավելի մեծ, քանի որ երկրում պատրաստի արտադրանքը ենթադրում է նաև ներքին հարկերի ավելացում, արտադրության աճ, ՀՆԱ-ում արդյունաբերության մասնաբաժնի ավելացում և այլն (տես գծապատկեր 4-ը):

¹⁷ Հաշվարկվել է հեղինակի կողմից՝ աղյուսակ 4-ի տվյալների և վիճակագրական ցուցանիշների հիման վրա

¹⁸ Հաշվարկները և կանխատեսումները կատարվել են ռեգրեսիոն վերլուծության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդների օգնությամբ: R^2 - Դետերմինացիայի գործակիցն է և ցույց է տալիս կախյալ փոփոխականի փոփոխության այն մասը, որը պայմանավորված է մոդելում դիտարկվող անկախ փոփոխականի փոփոխությամբ, որքան R^2 -ը մոտ է 1-ին, այնքան ավելի ուժեղ է անկախ փոփոխականի ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա, և հակառակ (օրինակ՝ եթե $R^2=0.8$, նշանակում է, որ Y-ի փոփոխության 80%-ը պայմանավորված է X-ի փոփոխությամբ, մնացած 20%-ը պայմանավորված է մոդելում հաշվի չառնված այլ գործոններով): R^2 -ը նաև հանդիսանում է ռեգրեսիոն մոդելի ընտրության գործիք և հաշվարկվում է

$$R^2 = \frac{\sum_{i=1}^n (\hat{y}_i - \bar{y})^2}{\sum_{i=1}^n (y_i - \bar{y})^2}$$

բանաձևով

Միաժամանակ, 2013-2016թթ. թե ներմուծման, թե արտահանման ապրանքային կառուցվածքում քանակական և որակական էական փոփոխություններ չեն գրանցվել, որոնք տնտեսության կայուն զարգացման ու տնտեսական բարձր աճի մասին են վկայում: Ներմուծման պարագայում գերակշռում են առաջին սպառման ապրանքները, բացառությամբ ադամանդի և թանկարժեք մետաղների, որոնք հետագայում արտահանվում են որպես վերամշակված արտադրանք: Արտահանման դեպքում գերակշռում են հանքային հումքը, մետաղական խտանյութերը, որոշ գյուղմթերքներ և մրգեր, հանքային ջրեր, որը նույնպես խոսում է տնտեսության ոչ արդյունավետ զարգացման մասին: Այստեղից հետևողություն, որ ՀՀ-ում արդյունաբերությունը դեռևս գտնվում է բավականին թույլ վիճակում: Հիմնականում զարգանում է լեռնահանքային և մասամբ ներկրված հումքի վերամշակմանն ուղղված արդյունաբերությունը:

Ուսումնասիրությունները փաստում են նաև, որ հայաստանյան տնտեսվարողները փորձում են գերշահույթի ստացում հետապնդել այնպիսի ապրանքներից, որոնց սպառումը այնքան էլ կախված չէ քաղաքացիների եկամուտից: Եթե հայտարարատուն մաքսային մարմնի աշխատակցի հետ ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում նշյալ ապրանքներից որևէ մեկը, որի ներմուծումը ազատված է մաքսատուրքից և ԱԱՀ-ից, հայտարարագրի մաքսային արժեքի որոշման 4-րդ՝ շուկայում միավորի իրացման գնի մեթոդով, հետևաբար նաև կիրառի ուղղիչ գործակիցներ, ապա արհեստականորեն տվյալ ապրանքի գինը կրարձրանա, շուկայում հնարավոր կլինի ավելի բարձր գնով այն վաճառել, ստանալ ավելի մեծ շահույթ՝ հիմնավորելով ներմուծման հետ կապված բարձր ծախսերը: Սա էլ կարող է հանգեցնել կոնկրետ ապրանքների շուկաների մոնոպոլացման և գերշահույթի հետապնդման՝ տնտեսվարողների կողմից:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2017թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ արտաքին առևտրաշոշանառությունը նախորդ տարվա նոյն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 24%-ով, ընդ որում՝ արտահանումն աճել է 21%-ով, իսկ ներմուծումը՝ 25.8%-ով¹⁹:

Ըստ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի²⁰, ՀՀ զարգացման հիմնական շարժիչ ուժը 2014-2025թթ. կդառնա արտահանումը, դրա առաջանցիկ աճը և, համապատասխանաբար՝ արդյունաբերության դերի և նշանակության կտրուկ ավելացումը: Արտահանման աճին ուղղված քաղաքականության հիմնական նպատակը տնտեսական աճի ապահովման նոր ոլորտների ձևավորումն է՝ ի հաշիվ ներկայումս

¹⁹ <http://www.armstat.am/am/?nid=126&thid=exa&submit=%F0%9F%93%99> (ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ)

²⁰ <http://www.gov.am/files/docs/1322.pdf> (ՀՀ Կառավարության պաշտոնական կայքէջ)

արտահանող և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման:

Ատենախոսության «Եզրակացություն» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները.

1. Բյուջեի եկամտային մասի համարման նպատակով մաքսային մարմինների կողմից հաճախ կիրառվում են մաքսային արժեքի հաշվարկման հսկիչ գներ, որոնք ֆիսկալային ազդեցություն ունեն և մեծածավալ ներմուծումների դեպքում հանգեցնում են հայտարարատունների կողմից մեծ վճարումների՝ պատճառ հանդիսանալով հրաժարվելու հետագա ներմուծումներից և արտաքին տնտեսական գործունեությունից: Մասնագիտական գրականության մեջ մաքսային արժեքի հաշվարկման ընդունված կարգի հիման վրա հեղինակի կողմից մշակված բանաձևի օգնությամբ բացահայտվել է կապը հսկիչ գների և շուկայական գների միջև: Հայտարարագրման ժամանակ մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի 5%-ի չափով ուղղիչ գործակից կիրառելու դեպքում նոր ստացվող գինը կրարձրանա առնվազն 6%-ով՝ սկզբնական հայտարարագրված մաքսային արժեքի նկատմամբ, եթե մաքսատուրքի դրույքաչափը 0% է: Մաքսատուրքի դրույքաչափի 10%-ի դեպքում նոր ստացվող գինը կրարձրանա 6.5%-ով և այսպես շարունակ: Ընդհանրապես, երկրի ՀՆԱ-ում մաքսային եկամուտների բաժինը (զարգացմանը զուգահեռ) աստիճանաբար պետք է նվազի՝ իր տեղը զիջելով ներքին հարկային եկամուտներին, ինչպես որ զարգացած երկրներում է:
2. Հաշվի առնելով << աշխարհագրական դիրքը՝ նպատակահարմար է մաքսային արժեքը հաշվարկել Բրյուսելի կոնվենցիայով սահմանված կարգով²¹, քանի որ ներմուծվող միավոր ապրանքի վերջնական արժեքի մեջ տրանսպորտային ծախսերը միջինացված մեծությամբ կազմում են 16%, իսկ արտահանվող միավոր ապրանքի արժեքի մեջ՝ 46%: Միևնույն ժամանակ, մաքսային արժեքում տրանսպորտային ծախսերի ներառումը հանգեցնում է ներմուծվող ապրանքի արժեքի առնվազն 20%-ով թանկացման:
3. Վերլուծելով << և մի շարք այլ երկրների փորձը՝ ցուց տալու համար մաքսային արժեքի հետ կապված բյուջեի ծևավորման, տնտեսական աճի, տնտեսական այլ ցուցանիշների փոփոխությունները 2010-2016թթ., բացահայտվել է, որ տնտեսության զարգացման՝ մասնավորապես ծեռներեցությանը խոչընդոտող հիմնական գործոնների ցուցանիշները

²¹ ԱՀԿ շրջանակներում գործող Բրյուսելի կոնվենցիան ստորագրվել է 15.12.1950թ. և ուժի մեջ է 28.07.1953թ.-ից (https://www.wto.org/english/docs_e/docs_e.htm)

Այս դեպքում ապրանքների տեղափոխման տրանսպորտային ծախսերը մաքսային արժեքում չեն ներառվում

շատ փոքր են տնտեսական զարգացում գրանցած երկրներում, ԵԱՏՄ անդամ երկրներում, որտեղ ցածր են տնտեսական աճի ցուցանիշները, նշված գործոններն ունեն մեծ ազդեցություն տնտեսության վրա:

4. Ուսումնասիրելով միջազգային փորձը և նպատակ ունենալով զարգացնելու տեղական արտադրությունը՝ <<-ում առաջարկվում է ներմուծվող այն ապրանքների համար, որոնց արտադրության ներուժը առկա է <<-ում, կիրառել «խառը» մաքսատուրքեր, խթանիչ մոտեցումներ և դրույքներ: Միջազգային փորձը վկայում է, որ զարգացած երկրներում մաքսային համակարգերի գործառույթների կիրառման առաջնային ուղղությունն է ԱՏԳ մասնակիցների սպասարկումը, մինչդեռ <<-ում զգայի է վարչարարական միջամտությունը մաքսային կարգավորման և մաքսային արժեքի հայտարարագրման ժամանակ: <Ետևաբար, անհրաժեշտ է մաքսային կարգավորման ֆիսկալ գործառույթից աստիճանաբար անցում կատարել միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստող կարգավորող գործառույթին: Անհրաժեշտ է վարել այնպիսի քաղաքականություն, որ գների ինդեքսներն ունենան աճի հակառակ ուղղվածություն, կիրառել արտոնյալ մաքսային կարգավորում՝ նոր տեխնոլոգիաների, սարքավորումների և արտադրական գործընթացը կազմակերպելու միջոցների ներմուծման նկատմամբ, ստեղծել նպաստավոր ներդրումային միջավայր՝ գիտատար և աշխատատար ճյուղերի զարգացման համար, ինչպես նաև խստացնել պատասխանատվությունը մաքսային ծառայողի կողմից ոչ հավաստի մաքսային արժեքի հաշվման և պաշտոնական դիրքի չարաշահումների հետ կապված, << Արտաքին գործերի նախարարության՝ այլ երկրներում գործող գերատեսչություններին կից ստեղծել շուկայի ուսումնասիրությամբ զբաղվող կառույցներ, ինչն էլ կնպաստի տնտեսական աճի արագ ապահովմանը:
5. Մաքսատուրքերի մեծությունից կախված՝ փոփոխվում են ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսականին ու ծավալները, որոնց փոփոխություններն ել անդրադառնում են կազմակերպությունների կողմից պետական բյուջե գանձվող պարտադիր վճարների մեծության վրա, ինչպես նաև խթանում կամ խոչընդոտում են դրանց արտադրական, ներմուծման և արտահանման գործունեությունները: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ մաքսատուրքի դրույքաչափի 2%-ով բարձրացումը հանգեցնում է երրորդ երկրներից << ներմուծման ծավալների 23%-ով կրճատմանը և ԵԱՏՄ երկրներից՝ 12%-ով աճին: Ընդ որում, ԵՄ տեսակարար կշիռը << արտաքին առևտրաշրջանառության մեջ 0.2%-ով նվազել է և հասել 25.3%-ի, միաժամանակ, աստիճանաբար աճել է ԵԱՏՄ բաժինը:

6. 2017թ. ՀՀ-ում կանխատեսվում է ՀՆԱ-ի 2.95% աճ, որն, ըստ հեղինակի, պայմանավորված կլինի ինչպես ՌԴ տնտեսության և պղնձի համաշխարհային գների վերականգնմամբ, այնպես էլ 2016թ. ՀՀ-ում իրականացված խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններով: 2011-2016թթ. ցուցանիշների վերլուծության արդյունքները, որոնք հնարավորություն են ստեղծել կատարելու կանխատեսումներ, ցույց է տալիս, որ ՀՀ-ում արտահանման 1%-ով աճը հանգեցրել է ՀՆԱ-ի 0.5-1.3%-ով աճի, իսկ 2020-2030թթ. այն կիանգեցնի 0.4-0.5%-ով աճի: Վերջինս ենթադրում է, որ տվյալ ժամանակահատվածում արտահանման մեջ կգերակշռեն հումքային արտահանումը և ծառայությունների արտահանումը, ինչն էլ նշանակում է ՀՆԱ-ում արդյունաբերության մասնաբաժնի կրճատում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Խաչատրյան Մ. Վ. «Մաքսային արժեքի կիրառման առանձնահատկությունը ՀՀ տնտեսության մեջ»: «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, Հունվար 2013թ, #1(151), էջ 22-23:
2. Խաչատրյան Մ. Վ. «Համաշխարհային տնտեսական ինտեգրացիան և մաքսային կարգավորումը»: «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, Մարտ 2013թ., # 3(153), էջ 62-64:
3. Խաչատրյան Մ. Վ. «Մաքսային արժեքի ազդեցությունը միջազգային առևտի վրա»: Երևան, «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, Մարտ 2013թ., # 3(153), էջ 64-66:
4. Խաչատրյան Մ. Վ. «Արտաքին առևտրաշրջանառության ավելացման ուղիները և կարևորությունը ՀՀ տնտեսական զարգացման համար». հոդված՝ «Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով ՀՊՏՀ 26-րդ գիտաժողովի: Երևան, «Տնտեսագետ», 2017թ., էջ 175-181:
5. Խաչատրյան Մ. Վ. «ՀՀ կազմակերպությունների ներմուծման և արտահանման գործունեության ցուցանիշների վերլուծություն»: Երևան, «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, Հուլիս 2017թ., # 5-6(201-202), էջ 186-190:
6. Խաչատրյան Մ. Վ. «Ներմուծվող և արտահանվող ապրանքների տրանսպորտային ծախսերի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա»: Երևան, «Այլընտրանք» հանդես, Հուլիս-սեպտեմբեր 2017թ., # 3, էջ 92-98:
7. Հակոբյան Ա. Ա., Խաչատրյան Մ. Վ. «Տնտեսության զարգացման վրա մաքսային արժեքի ազդեցությունը»: Երևան, «Բանբեր ՀՊՏՀ-ի», 2017թ., # 3(47), էջ 56-63:

ХАЧАТРЯН МАРЕ ВАГАНОВНА
**УЛУЧШЕНИЕ ОПРЕДЕЛЕНИЯ ТАМОЖЕННОЙ СТОИМОСТИ И ЕЕ ВЛИЯНИЕ НА РАЗВИТИЕ
ЭКОНОМИКИ В РА**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03. - “Финансы, бухгалтерский учет”.

Защита диссертации состоится 26-го декабря 2017г. в 15³⁰ часов, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна, 128.

РЕЗЮМЕ

Представленная научно-исследовательская работа посвящена методам определения и изучению таможенной стоимости в РА и ее влияния на развитие экономики страны, а также выявлению недостатков и задач, существующих в сфере. В результате исследования выявлены пути и методы решения вышеуказанных задач, возможные подходы улучшения определения таможенной стоимости в РА, оказывающие благоприятное влияние на экономику страны и на участия в международной интеграции.

Основной целью определения таможенной стоимости является расчет таможенных платежей на таможенной границе при перевозке товаров, применение средств стоимостного регулирования и ведение таможенной статистики. Таможенная стоимость является не только основой расчетов таможенных платежей, но и для составления внешнего платежного баланса, и следовательно, для развития всей экономики. Неправильное определение таможенной стоимости может привести к инфляции в стране, что и отразится на ряде макроэкономических показателей страны. Следовательно, появляется необходимость подробно изучить проблемы связанные с определением таможенной стоимости, проанализировать и выявить существующие проблемы развития экономики РА, обусловленные стимулирующим или препятствующим влиянием на них таможенной стоимости. Правильный расчет таможенной стоимости и преводимая таможенная политика важны и с точки зрения внешнеэкономической деятельности предпринимателей, поскольку они непосредственно влияют на финансовые показатели организаций.

Объектом исследования является экономика РА и таможенные регулирования внутри нее, а предметом - пути улучшения механизмов определения таможенной стоимости, оценка ее

воздействия на финансовые показатели предпринимателей и выявление возможных оптимальных вариантов с помощью использования международного опыта.

Цель исследования, изучив механизмы определения таможенной стоимости в РА, разработать и показать пути повышения их эффективности и выявить влияние на развитие экономики РА.

В результате аналитических и исследовательских работ, сделанных автором диссертации, получен ряд результатов теоретического, методологического и практического значений, из которых научную новизну представляют следующие:

- Выявлены и уточнены пути улучшения определения таможенной стоимости в РА, связанные с учетом расходов, с применением международных принципов, а также расчитаны и спрогнозированы соответствующие показатели.
- Выявлено влияние таможенной стоимости ввозимых товаров на цены товаров внутреннего рынка РА и дана количественная оценка посредством сопоставительного анализа.
- Выявлены и оценены влияние транспортных расходов на рост ВВП при импорте и экспорте товаров.
- Обоснованы пути реализации защитной и регулирующей функций в таможенной политике РА.

Решения, представленные в диссертации, могут быть применены в таможенной политике государства и в мероприятиях, по повышению эффективности работ, направленных на развитие экономики, а также, в ходе мероприятий, реализуемых различными ведомствами РА по таможенному регулированию.

KHACHATRYAN MARE VAHAN

**IMPROVEMENT OF CUSTOMS VALUATION IN THE RA AND ITS INFLUENCE ON THE ECONOMIC
DEVELOPMENT**

The abstract of the thesis for receiving the degree of PhD in the speciality 08.00.03. - "Finance, Accounting".

The defence of the thesis will take place on December 26, 2017 at 15³⁰ p.m. at 014 Specialized Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics. Address: 128, Nalbandyan str., Yerevan 0025.

ABSTRACT

The scientific research is devoted to customs valuation methods and mechanisms and its influence on the country's economic development, as well as to revealing the problems and imperfections in that field.

The research has shown ways and methods of addressing the above mentioned problems, possible approaches to improve the RA customs valuation thus positively influencing the country's economy and its foreign integration process.

Customs valuation of the goods transported through the customs border of Armenia aims at calculating the customs ad valorem (according to the value) duty, applying value regulating measures and customs statistics. Customs value serves a basis for not only the calculation of customs fees but also drawing up foreign trade balance of payments and consequently for the overall economic development.

Miscalculation of customs value can cause inflation in the country, the latter affecting a number of macroeconomic indicators. Therefore, customs valuation issues need to be studied thoroughly at the same time revealing and analysing the main problems related to the economic development of the country which are likely to be positively or negatively affected by the customs value. Determining the correct rate of customs value and a proper customs policy implementation are also important for business entities for both import and export activities as they have a direct impact on the organizations' financial indicators.

The study object is RA economy and customs regulation in it. The subject of the research is the ways of improvement of customs valuation mechanisms, assessment of its influence on business entities' financial indicators, as well as finding rational approaches with the application of international practice.

The author of the dissertation has revealed issues that directly or indirectly hinder foreign trade development, price stabilization, providing favourable conditions for investments, fighting corruption and shadow economy, boosting living standards in the country and promoting foreign integration.

The author's research and analysis have resulted in a number of economic, methodological and practical findings, among which the following are considered a scientific novelty:

- Identified and are performed ways of improving customs valuation in the RA, related on costs inclusion and usage of international principles, and had predicted the relevant ratios.
- The influence of imports' customs value on the prices of goods in RA local market has also been studied and a quantitative evaluation of that influence has been made based on a comparative analysis.
- Issues related to the transportation costs of imports and exports and their impact on the GDP growth is another finding of this research.
- A reasoned approach of the RA customs policy and its implementation has been established through application of protective and regulatory functions.

The solutions presented in the dissertation can be applied in procedures and activities aimed at increasing the efficiency of the country's customs policy and economic development, as well as by respective RA administrative bodies in the process of customs regulation.

A handwritten signature in black ink, appearing to read "V. V. Slobodchikov".